



ԻՐԱՎՈՒՆԿ

Rev Péré G. Kalemkarian Michitaris
te ngasse № 4 Vienne

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԶՄԱՆՈՐԳՐԱԳՐՈՒԹԻՒՆ	Համակ դրամ եղայն դրկել հետեւեալ հասցով ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ՀՐԱԳՐՈՅ. — ՎՍԻՆԱ (Պուլկարիա) Редация на ВѢСТНИКЪ „Иравункъ“ ВАРНА (България)	ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ՀՐԱԳՐՈՅ. — ՎՍԻՆԱ (Պուլկարիա) Rédaction du journal „Iravounk“ V A R N A (Bulgarie)
---------------------	--	---

ՑՈՒՑԱՄՈԼՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԵՋ

Անգլո-Պոէր պատերազմին առ թիւ Պոէրներու դիւցազնական քաջութիւններէն աւելի անոնց գաղտնապէս ահագին պատրաստութիւններ տեսած եւ լռիկ մըն լիկ դործած լինելը բոլոր աշխարհի զարմանքը չալժեց :

Անգլիացիք որ Թամսօվալի եւ Օւանթի բազմաթիւ ծովերէն մուտ գտած էին, Պոէր ժողովուրդին գաղտնի զինավորութիւններուն եւ թնդանթի ու ռումբերու ահագին մթերքներ փոխադրելուն բոլորովին անգիտակից կը թուէին. այնպէս որ պատերազմի գալ տին վրայ անգլիացի հրամանատարներ, Պիլլըր, Մէթուէն եւ ուրիշներ, ափի բերան ծաղիկն Պոէրներու փորձաւորութեան եւ մթերքին առջեւ. որովհետեւ թռնդանթներուն եւ հրացաններուն ամենէն որ եւ կատարելագործեալ տեսակներն ունէին Պոէրք եւ զանոնք Պրման զինուորէ մը աւելի ճարպիկ ու վարժ կերպով կը գործածէին : Այս իրողութեան հանգէպ Հոնտրայի մասուր, Անգլիոյ նախարարները ու գիւտագէտները ապշուածեմ իրարու կը հարցնէին «Այդ զէնքերը երբ փոխադրել են, երբ ատոնց զինավարժութիւնը ըրեր են, ինչպէս անգլիացի հիւպատոսները եւ գաղտնի պաշտօնեաներ չեն իմացեր ու մեզ տեղեկագրեր :»

Շնորհիւ այդ գաղտնապահութեան եւ զգոյշ խորագիտութեան ափ մը Պոէր ժողովուրդը Անգլիացի ամենի զօրութեանը գէտ տարիէ մ'աւելի է որ տոկոս եւ գիտ կը տոկայ :

Մենք՝ որ Պոէրներէ աւելի գաղտնապահ եւ խորագէտ (գուր. նա) ըլլալ պարտինք, այս պարտքը կանտեսելք եւ աւելի ցուցամուրութեան կը հետեւինք : Մեր թըշնամին անհամեմատ աւելի ուժը մեր տկար ուժին հետ համակշիւելու համար խորագիտութիւնը մեզ զօրավիզ ընտրելու ենք. եթէ ու-

ժերնիս լինածին ուժէն պակաս է, գոնէ խիբերնիս աւելի ըլլալու է : Անխորադէտ ընթացքը եւ դիւրորոշքը եւեւակալութիւնը՝ զոր Յոյները ցոյց տաին վերջի պատերազմի առեւն եւ չարաշար պարտուիցան թիւրքէն, նոյն խայտառակ պարտութեանը պիտի են. թարկէին Պոէրները, եթէ ասոնք խորագիտութիւնը իրենց զօրավիզ ընտրած չըլլային : Նոյնպէս մեր յիշափոխական գործունէութիւնը աղգին այս աստիճան սուղի չի պիտի նստէր եթէ մեր քարիչները ցուցամուր ըլլալէ աւելի խորագէտ ըլլային : Մարդ առանց սրտմտելու չկրնար յիշել այն բաղձաթիւ տխուր դէպքերը որոնք միայն ցուցամուրութեան հետեւանք էին : Օրինակ. Փոքր Հայքի մէջ նոր կազմակերպուած Հ' չակեան մասնաճիւղերուն, Նաղար Բէկի հրաժանգով, իժնէ թիւրքերու փոխադրութեան, մէկ քանի քաղաքներու պատերուն տաճկերէն յայտարարութիւններ փակցնելը. որուն հետեւանքը եղան այդ նոր կազմակերպութեանց ցրուիլը. Եօզկատի առաջին կոտորածը եւ Հնկիւրիի մէջ կախաղաններու բարձրացումը, սրտնց քիչ ծաղիկ թու. մայիսն եւ Պայիսեան ալ զոհ պիտի երթային :

Նաեւ Տրապիզոնի մէջ 95ին Դաշնակցականներուն Պահրի Բաշան զարնելու փորձէն վերջ Թաւուզիկ մը հրատարակելով «Ասկէ յետոյ հայ յիշափոխականի գնդակը թիւրք բաշաներու եւ պաշտօնեաներու կողմէն պիտի ուղղուի» ըսելը. որուն ալ հետեւեալքը եղաւ մայիս 44ի համաձայնութենէն Ռուսիոյ ետ քաշուիլը կամ աչք գոցելը, ասոր յաջորդեց Տրապիզոնի կոտորածը, որ ընդհանուր շարքերուն սկզբնաւորութիւնը եղաւ :

Անցելոյն մէջ գործուած ցուցամուրութեան տխուր հետեւանքներու շարքը շատ երկար է. եւ գծադրաբար անոնցմէ խրատուելու եւ փորձառու ըլլալու առաւելութեամբ ալ չեն փայլիլ մեր կարգ մը գործիչները ու հրապարակագիրները. Թարմ օրինակ մը հոս յիշեմ. դեռ

անցեալ օր Սասնոյ Զբաղանքի կոտորածին պատճառ ինչպէս թիւրք հայ ֆեոդալները ցոյց կուտար, որուն հակառակը կը պնդէին հիւպատոսներ, Պատրիարքարանը եւ երպարական մասուր, հոս գտնուեցաւ խելացիին (.) մէկը, որ Պոէրներէն գրուածի ձեւով թղթակցութիւն մը թիւրք «Շարժում»ի մէջ կը պոսար թէ «Աղբիւրի. ընկեր գաշակցական զինակիր Սիդորանի կի իսմըր բռնելու համար Զրազանրը տեւած են», մինչդեռ Անգլիայի ուրիշ գաւառի մը մէջ բռնուած ըլլալը թիւրք լրագրութիւնն ալ կը խոստովանէր եւ չէր համարձակուի այդ խուճիւն Զրազանքի մօտ գտնուելու սուտը չի. նիւ եւ ատոմ կոտորածը մասամբ արգարաջնել ջանալ :

Նոյնպէս ցուցամուրութիւն չէ՝ եւ նիւ թերթերու մէջ ի ձայն փողոյ գրել թէ վառնայի մէջ հայերը զինավորութիւն կընեն. Եղածը բան մը չէ. մենչդեռ անգլիեր Պոէրները տարիներով ահագին պատրաստութիւններ կը տեսնեն ոչ որ չ'իմանար, իսկ մենք գործի մը հաղի գաղափարը յաջած եւ գործնական քայլը տակաւին չ'առած փողով եւ թմրուկով կը յայտարարենք իւրեւր աշխարհի. Որովհետեւ ցուցամուր ենք. եւ այս մուրթիւնը մեզ ամեն յառաջագիտութենէ կը զրկէ :

ՍԻՍԻ ԿԱԹՈՂ. ԽՆԴԻՐԸ

Կիլիկիոյ կաթողիկոսական խնդիրը այսօր առեղծուած մը եղած է մեր Պոլսոյ Պատրիարքայանի ժողովականաց. Օրմանեան կրօն. ժողովոյ երկու Ս. ատենապետներուն բացակայութենէն օգտուելու գեղով, Խառն ժողովոյ նախընթաց նիստին մէջ Դրան պահանջին համակերպող որոշումներ տալ տուած է. մինչդեռ Սանկունի Սրբազան այդ օրը իր բացակայութիւնը իմացնելով ազգարարած էր որ ժողովը վճռական որոշում չտայ :

Խառն ժողովոյ վերջին նիստը որ անցեալ ուրբաթ օր տեղի ունեցաւ, խիստ ազմկալի եղած է. կրօն. ժողովոյ ատենապետները

պահանջած են որ Կիլիկիոյ կաթողիկոսական խնդրոյն առթիւ նախորդ նիստի որոշումները չեղեալ նկատուին, քանի որ օրինական մեծամասնութիւն չկար, հետեւաբար կեսարիոյ Առաջնորդ Տրդատ եպիսկոպոսի Սիւ զրկելու որոշումը յետաձգուի եւ ցանկը Դրան չտրուի Պատրիարքը եւ աշխարհական անդամները հակառակը պնդած են :

Խապայեան Տ. Սահակ եպիսկոպոս, որ տասնեակ ամիսներէ ի վեր Կիլիկիոյ կապաւոր կաթողիկոսական ընտրութիւնը կատարել տալու համար, ձանձրացած կուգէ այլ եւ մեկնել : Տ. Յարութիւն Պատրիարք եւս անոր վերադարձը կը պահանջէ. Բայց Խառն ժողովը այս անգամ կրկին դրեց Տ. Սահակ եպիսկոպոսի որ ժամանակ մըն ալ մնայ Ատանայի մէջ : Միւս չորմէ ալ Տ. Տրդատ եպիսկոպոսի կեսարիայէն Սիւ երթալու մասին պաշտօնական լիզլիւր կը պատրաստուին :

Վերջապէս Գորտեան հանդիպի մը կերպարանքը առնող սա Սիւսի կաթողիկոսական ընտրութիւնը, որ տարիներէ ի վեր տնտեսելիմնաց կ'երեւայ թէ տակաւին բաւական երկար առեւն չի պիտի կրնայ լուծուիլ : Ասկէ առաջ ամբողջ Պատրիարքարանը Բ. Դրան դէմ կը մաքաւէր, հիմակ կռիւր Պատրիարքարանի մէջն է, որովհետեւ Օրմանեան եւ Տատեան Դրան փաստաբանները կը ներկայանան ընդդէմ ժողովականներուն :

Խնդրոյն այսքան բորբոքուած վիճակը ժողովուրդէն ծածկելու համար, Պատրիարքը մասուրին ներկայացուցիչներուն ու է տեղեկութիւն տալ չ'արտօներ. Օրմանեանի փոփաքին համեմատ ալ դրաքննութիւնը արգիլած է «Կիլիկիոյ եւ Կաթողիկոս» բառերը թերթերուն մէջ գրել. նոյնիսկ Տրդատ Եպիսկոպոսի Սիւ ճամբորդութիւնը պարզ ուղիւղեց, ցուցիւն մ'է ըսած էին :

Վերջապէս ժողովուրդը ու մասուր այսքան կենսական խնդրոյ մը առջեւ լուծեան գաղափարաւած են. միայն մէկ քանի կրօնականներ են որ կը մաքաւին աղ-

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

—)(—

Սրբազան Հայրապետի Օծման Եօթներորդ տարեդարձին առթիւ իշխմանս Մայր Տաճարին մէջ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուած է և բարեմաղթութեան մասնաւոր աղօթքներ եղած են և կէս օրին վեհ. Հայրիկի նախագահութեամբ չքեղ հացկերոյթ մը տրուած է վեհապետի մէջ իսկ գիշերն ալ փահատուին ու զէորդեան նետարանը զարդարուած են :

—Ռուսիոյ զխաւոր տեղերու գե. զորութեամբական շուկաները լեցուած են աշխարհատաշակ հայազգի նկարիչ Հանգուցեալ Յ. Ալմազովսկիի նկարներովը : Հանգուցեալի նկարները կը հաշուին աւելի քան 5,000 . որոնց պիտի որ մահուանէն յետոյ բարձրացան, երկու տարի առաջ 800 ռուբլի արժէք ունեցող նկար մը այսօր 2000 ռուբլիի գնուած է :

—Պաշտօնէի մէջ Բոսֆէսէօր Միխայիլեանօի սպանման հետեւանօք երկու Հայեր ևս բաւական նեղութեան ենթարկուած են Ռուսիոյ կառավարութեան ձեռքով : Մին Ռուսոստեքէն Պ. Արամ Մալխազունի ձերբակալուելով բանտը նետուած է մէկ ու կէս ամիսի չափ իրիկ Մակեդոնական Յեզու. փոխական Ընկերութեան անդամ, իսկ երկրորդը Սիլիստրէէն Պ. Արթիւր Սիմոնեան ժընէվէ վերադարձին կը լռուի Մակեդոնիոյ Յեզուփոխականաց Օսկան Էֆֆօն թերթին խմբագրութեան վրայ յանձնարարական մը աւելցած ըլլալուն համար : Երկուքն ալ բաւական նեղութիւններ կրած են բանտին մէջ և յետոյ արտաքսուած երկրէն :

—Մարդկութեան Համաժողովի հոկտ. 2ի նստին Պ. Հ. Ա. ռաքէլեան 95-99ի Հայաստանի և Պոլսոյ կոտորածներու և Սասնոյ յիշատակներ վերջի շարքերու մասին տեղեկագիր մը ներկայացուցած է : Ժողովը այս տեղեկագիրը լռուի յետոյ միաձայնութեամբ հետեւեալ որոշումը կը քուէարկէ : «Մարդկութեան Համաժողովը ինքնատի կառնէ որ՝

1. Թուրքիոյ Հայերը կիրպ կերպ իւր ժողովութեանց, բարբարոսութեանց ենթակայ ըլլալով կը չար. չարութիւն :

2. Դժբաղդ Հայերը կը խողովուրդեն, կը կախուին ու կարուին : Կը դատապարտէ և կը պարտաւ յայս բարբարոսութիւններն ու ոճիրները և կոչուէ որ ուսին անոք որ մարդկութեան խիղճը ունին շտապեն վերջ մը դնելու համար այս հակամարդկային ոճիրներուն :

—«Իրաւունք»ի ընթերցողներուն ծանօթ է որ Բարիք զուժա. ըստ խաղաղութեան համաժողովին մէջ ի նպատակ Հայոց տրուած բանաձեւին «Մէջլէթէթ»ի խմբագիր Պ. Ալմազովսկի զէս խօսած էր ի միջի այլոց առարկելով թէ՛ Հայերը մեծամասնութիւն չեն կազմիր և թէ՛ Հայաբնակ գաւառներու մէջ ալ մեծամասնութիւնը թիւքք եւ քիւրդք են :

Այժմ այս առթիւ «Ռուսաստան»ի ծանօթ խմբագիր անօրէնը Պ. Կ. Պասմաճեան Պ. Ալմազովսկիի առարկութեան գէժ հրապարակու հետեւեալ պատասխանը տուած է լ'Առմէնի վերջին թիւով :

« 1877 ի Ռուսոս—Թիւրք պատերազմէն վերջը. Օսմանեան կառավարութիւնը իր Ասիական գաւառները բաժնեց այնպէս որ ուր թուրք տարրը մեծամասնութիւն կազմէր :

Այս արդիւնքին հասնելու համար հարկադրուեցաւ Հայերուն մեծա. մասնութիւն կազմած գաւառներուն սահմանները չափաւորել և միացուցած դրացի նահանգներու հետ : Ահաւասիկ ճշգրտութիւնը որուն համար Եւրոպական պետութիւնները իրենց Սուլթանին ներկայացուցած 1895 Մայիս 11 յիշատակարանին մէջ պնդեցին : Վասնզի Հայկական գաւառներու բաժանումը ազգա. զրական եղաւ և պահուեցաւ հին բաժանումը : »

—Նաև Ընկերութեան միջազգային Համաժողովին իր Սեպտ. 27 ի նիստին մէջ բոլոր աշխարհի բռնաւորներուն գէժ զայլոյթ յայտնող բանաձեւ մը քուէարկած է, որուն մէջ Հայոց մասին հետեւեալը կայ : «Բարիքի միջազգային Ընկերութեան Համաժողովը անգամ մը ևս հաստատելով եղբայրական Համա. կրանքի զգացումները որ պարտին բոլոր ժողովուրդները միացնելու. զիւրութեան և ջարդերու դէմ, աշխարհի աշխատաւորներուն մատնանիշ կընէ զանազան կառավարութեանց եղբունական մասնակցութիւնը և ընկերութեան և խորհրդարանական խմբակները կը յանձնարարէ «մեն առթիւ միջա. մտել ի նպատակ նողկալի կերպով հարստահարուած Հայ ժողովուրդին, որուն Համաժողովը կը զրկէ իր ջիւղ ու խանգավառ համբարշտութեան հաւաստիքը : »

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Մաքս Միլլերի վրայ. —Հանգուցեալ մեծանուն Բոսֆէսէօր ժանր հիւանդութենէ մը ազդեցու. լուն վրայ : Իրեն խնդակցութեան եկած հայրենակցի մը պատմած է թէ, երբ իր հիւանդութեան լուրը հիգիւստանի Մաքրաս քաղաքը

իմացուէր է. ծերունի Պրահման մը Հնդկներուն զգացած ցաւը իրեն նկարագրած է սա կերպով : «Ըստ մեր սովորութեան աղօթա. տեղին երթալով Հնդկները փա. փաթ յայտնեցին որ մեր քուրմը ձեր առողջութեանը համար աղօթէ սակայն քուրմը Զառարկեց թէ չը կրնար աղօթել այնպիսի մէկի մը համար որ Հնդկի ծնած չէ. ուրուն փոխարէն իրեն պատասխանեցինք թէ թէև Միլլեր հնդկ չէ բայց Հնդկէ մը աւելի խելացի է : Ու միեւնոյն ատեն առաջ նուէրներ տրուեցաւ քուրմին, որ տեղի տուաւ : Հետեւեալ իրիկուն Տաճարը գացինք ծաղիկներով, արմաւեններով, նուշերով և քափուրով և ներկայացուցինք քուրմին. սկսաւ Հնդկական աղօթքը երգել որ ժամ մը տեւեց : Յետոյ քուրմը իրեն տրուած նուէրներուն մէկ մասը դարձուց միջի պատուիրելով ձեզի զրկել : »

Նոր քննաւոր մը. — Ամերիկացիք նոր թնթանօթ մը հնարած են որ մինչև քսան և մէկ մղոն հեռաւորութեամբ աւազ կը նետէ : Ծ. Արեւելքի մէջ միջազգային Լուսաւորութիւն. Անգլիա 45 նաւ ունի որոնց տարողութիւնն 119,000 թ. նո 10,700 սպայ և զինուոր 82 խոշոր 392 արագահարուած և 162 ուրիշ թնթանօթներ :

Ռուսիա 22 նաւ 80,500 թ. նո 6,100 սպայ և զօրք 126 խոշոր 293 արագահարուած և 78 ուրիշ թնթանօթներ :

Միացեալ Նահանգները 27 նաւ 54 360 թ. նո 4080 սպայ և զօրք 74 խոշոր 204 արագահարուած և 54 ուրիշ թնթանօթներ :

Ճապոն 7 նաւ 1483 սպայ և զօրք 11 խոշոր 68 արագահարուած և 8 ուրիշ թնթանօթներ : Կերմանիա 14 նաւ 70,600 թ. նո

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՒՆԵՐ [29]

(ՊԱՏԿԵՐ ՍԵ ՏԱԶԱԶԱՏԱՏԱՆԻ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ)

Լ.Բ.

Տէր Վահան իր երազած տիպար ուսուցչի յատկա նշելով Պուրգէնի վրայ մարմնացած կը տեսնէ. թէև իրենց գիշերական վարժարանի պիւնճէի վըտիտութիւնը չի քաջալիբեր զինք, իր ևս ամբողջ գիւղի ցանկութիւնը անոր յայտնելու : Այս մասին երկար մտածելէ ետք օր մ'ալ իր գաղափարի հետ բոլոր գիւղացիներու ցանկութիւնը կը պարզէ անոր :

Գուրգէն ալ իր սրտին ու նպատակին մօտիկ կը գտնէ այդ պաշտօնը. «Եւ նիւթական վարձատրութիւնը թէև խիստ համեմատ բարոյակտն անգնա. հասելի ծառայութիւն մը մատուցանելու պէտքը կըզգայ իր Հայրենեաց :

Առանց ձեւաբանութեան՝ բանակցութիւնները շուտ կը լմնան ու Գուրգէնը կը ընտանանէ իր Հայրենի գիւղի վարժապետական պարզ պաշտօնը :

Տէր Վահան իր ցանկութեան հասած բոլոր դիւզակցներու հետ մեծ ուրախութեան մէջ էին :

Այն սէր որ Գուրգէն կը տածէր իր Հայրենի գիւղի նկամամբ ու այն տեսչը, որ նա ունէր

իր հայրենակից գեղջուկներու բարոյական ու մըտաւոր վիճակի քիչ շատ բարելաւութեան համար, անդիմադրելի կերպով կը մղէ իր սիրտն ու միտքը դէպի այդ պարզ վարժարան, ու պիտի կերպով կը կապեն զինք այդ գեղջուկ ուշիմ տղայոց դաստիարակութեան գործին հետ :

Իր սովորած ու իմաստասիրած մէթօտով կըսկսի վարել այն վարժարանը, որուն բարոյական առաջը զիւրութիւնը տեսնելով գիւղացիները Գուրգէնի վերաբերմամբ իրենց ունեցած համակրանքը կը կրկնապատկեն : Իւ գիւղական ամեն մէկ խնդրոյ ու գործի մէջ, անոր ձայնը կը լսուի կո. նկնայ : Այլ Գուրգէն պարզ վաճառական մը չէր, անիկա հեղինակութիւն ունեցող, աշխատէր ու անձնուէր մէկըն էր, որու առողջ խորհուրդներն ու բանաւոր կարծիքները, գիւղական համայնքի օգտին համար ամենէն մեծ ազդակն էր :

Գուրգէն, զարոցի մէջ տեսականապէս իր սովորածներէն զատ, աննկուն աշխատութիւնով, յարա. տեւ ընթերցանութիւնով, իր մտաւոր պաշարը՝ ճոխացուցած էր : Հայ և օտար շատ մը դասական և իրական մատենագիտները ծանօթ էին : Իր աւմենէն սիրական բանն էր, Մանկավարժական լուրը խնդիրներով հետաքրքրուելու գործնական կըրթութեան նոր միջոցը սերտել : Տեսական ու գործնական իր ծանօթութիւններով ու մտքի բեղունութիւնով, իր ուսուցման եղանակը ձեւած էր, ամենէն գործնական օրինակներու վրայ :

Ամառուան երեք ամիսները, զարոցի արձակուրդի օրերն ինքն ալ, շատ անգամ, աշխատութեան բահ ու բրնձը ձեռք, իր սաներով հողի ու քաւրի հետ կը խաղար : Արդէն այդ գիւղը, երկրաւ

գործական տեսակէտով, բաւական զարգացած ու իւրենց աշխատութիւնով, բացի հացահատիկներու ամեն տեսակէն, բանջարեղէններու և ընդգէննե. լուն շատ մը տեսակներ ալ, ամենայն յաջողութիւնով կը մշակէին : Այս պատճառաւ ալ, Սալոնիկոյ, բանջարեղէնաց շտեմարանը նկատուած է նաւ վաճառցաի օրերուն, ամեն աղայ, իրենց տան մըշակութեան գործերով կը պարապէր, ու գարոցի մէջ Գուրգէնէ ուսած երկրագործական նախնական ծանօթութիւնները, գործնական կեանքի մէջ իրապէս կը սովորէին :

Վերացական ամեն գիտելիքէ ու միաք բթաց. նող առարկաներէ բնաւ չէր ախորժեր : Գիւղական կեանքի պահանջքին վերաբերեալ պիտանի ուսումներ ու ծանօթութիւնները կը կազմէին իր զարոցի ծրագիրը : Օրական սահմանուած դասերէն դուրս, երկու ժամ ալ՝ դաշտերու մէջ, կամ պուրակի մը խորշ, հողի, բոյսի ու տունիկի վրայ, գործնական ծանօթութիւններ ու մարմնամարզա. կան աշխատութիւններ կը կատարէր. շատ անգամ իր սաղերու խմբով, ոչխարներու բէր (կթելու մակաղաւթեղ) կերթար, ոչխարաբուծութեան վերաբերեալ գործնական դասեր կաւանդէր անոնց ու գիւղացիները կը հիանային իրենց աննման վարժապետի վրայ :

ՀԱՅԱՐԱՍ Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

(Շարունակելի)

